ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային «Կումայրի» օրաթերթի հավելված

1990 թ. Նոյեմբեր, № 3: Գինը՝ 50 կոպ.:

Տասնյակ հազարավոր հայրենակիցներ չար աղետի զոհ դարձան, շատերը կորցրին բնակարաններն ու գույքը, աշխատանքի տեղը:

ՎՇՏԻ ԵՎ ԱՐԻՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13

Ռազմատրանսպորտային ավիացիայի ավելի քան 300 ինքնաթիռ է գործողության մեջ մտցվել երկրաշարժի շրջան բեռներ փոխադրելու հա մար:

Հայաստանում երկրաշարժից տուժածների օգնության ֆոնդը՝ միութենական բոլոր հանրապետությունների աշխատանքային կոլեկտիվների, առանձին քաղաքացիների կողմից փոխանցված ընդհանուր գումարը հասավ 40 միլիոն ռուբլու:

Իտալիայի արտաքին գործերի մինիստրության պատասխանատու աշխատակից Վիտտորիո Զամբոնին, որ այդ երկրի պատվիրակության հետ (նրա ղեկավարն էր) Երևան էր ժամանել, հայտարարեց, որ իտալական կառավարությունը որոշել է լրիվ վերականգնել Հայաստանի ավերված քաղաքներից կամ ավաններից մեկը: Այդ նպատակով Իտալիայից կժամանի տեխնիկական մասնագետների մի խումբ, ասաց Վ. Զամբոնին:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14

Այդ օրը փլատակների տակից հաջողվեց հանել 20 կենդանի մարդ: Փլատակների տակից հանվել են նաև 135 զոհվածներ: Յոթ օրվա ընթացքում փրկվածների ընդհանուր թիվը մոտ 15 հազար մարդ է: Այդ ընթացքում պարզված զոհվածների թիվը 21775 է: Հոսպիտալացված է 5763 մարդ:

Շարունակվում էր Պաշտպանության մինիստրության զինվորական ուժերի և միջոցների ավելացումը երկրա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

«ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ» ՀԻՇԵՑՆՈՒՄ Է

«Կումայրի» թերթի հավելվածի համար քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները կարող են ներկայացնել ամփոփ ու ամբողջական տեղեկություններ զոհված աշխատողների մասին, ինչպես նաև նրանց լուսանկարները: «Հիշողությունը» կազմակերպությունների կողմից ներկայացված նյութերին ու լուսանկարներին կհետևի առանձին էջեր կամ ամբողջական համարներ:

Shirakcentre.org

1988 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14

(Սկիզբը՝ 1-ին էջում)

շարժի հետևանքների վերացման համար: Դեկտեմբերի 14-ի դրությամբ գործողության մեջ էր դրվել անձնակազմի 20 հազար մարդ, ինժեներական տեխնիկայի 770 միավոր, 1,5 հազար ավտոմեքենաներ: Տուժածներին մշտական օգտագործման են տրվել 5869 վրաններ ավելի քան 100 հազար տեղով, 22 հազար տաք բաճկոններ, 5 հազար փափախներ, 10 հազար տաք ձեռնոցներ: Բանակային դաշտային խոհանոցները շարունակում էին տաք սնունդ պատրաստել: Դաշտային մայրուղի է անցկացված՝ Սպիտակին, օրական 2,4 հազար խորանարդ մետր ջուր տալու համար: Փլատակների մաքրման ընթացքում զորքերը հավաքել են ավելի քան 800 հազար ռուբլի և հանձնել համապատասխան մարմիններին:

Այդ հաղորդումների սոսկ մի մասը աղետասահմանից անընդհատ ստացվող օգնության մասին:

5 հազար դոլար, հագուստեղեն, դեղամիջոցներ, բուժսարքավորանք է Հայաստան ուղարկել «Ֆրենդշիպ ֆորս» (ԱՄՆ) կազմակերպությունը: Դեղամիջոցների բեռ է ուղարկել բարեկամության և կուլտուրական փոխանակությունների «Մեքսիկա—ԽՍՀՄ» ինստիտուտը: Հնդկա-խորհրդային կուլտուրական փոխանակության ընկերությունը և «Խորհրդային Միության բարեկամները» ընկերությունը ուղարկում են 70 հազար մեկ անգամ գործածության շպրիցներ, մի քանի հարյուր կոմպլեկտ տաք հագուստ: Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախագահ միտրոպոլիտ Պաուլոս Մար Գրիգորիոսը պատրաստակամություն է հայտնել անհրաժեշտ օգնություն ցույց տալ տուժածներին: «Ավստրալիա—ԽՍՀՄ» ընկերությունը հավաքել է 3 հազար դոլար, դեղամիջոցներ ու բուժսարքավորումներ գնել, կազմակերպել տաք հագուստի հավաքման գործը: ՏՓԽ-ի անդամ երկրների ներկայացուցչությունների և քարտուղարության աշխատակիցները որոշել են օգնության ֆոնդ փոխանցել իրենց ցերեկային աշխատավարձը: Հոնորարի մի մասը փոխանցել է լեհ դիրիժոր Կ. Սարիպան, որը համերգներով հանդես եկավ Լենինգրադում:

Աշխարհի շեմպիոն Գարի Կասպարովը Ֆրանսիայում ուղևորության ժամանակ ունիկալ միաժամանակյա սեանս կազմակերպեց 89 տախտակների վրա: Նա ընդարում հարյուր տոկոսանոց արդյունքի հասավ: Իսկ սեանսի ողջ հոնորարը փոխանցվեց Հայաստան՝ երկրաշարժից տուժածների օգնության ֆոնդին:

ՓՐԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԻՆ ԵՐԿԻՐԸ ՄԵՋ ՀԵՏ Է

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՆԱՆՑ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ

Խորհրդային կանանց կոմիտեն հեռագիր է հղել հայ ժողովրդին՝ նրան հասած դժբախտության առթիվ: Հեռագրով խոր կարեկցանք և ցավակցություն է հայտնվում Հայաստանի ժողովրդին տարերային աղետի առթիվ, որից ողբերգաբար զոհվել են բազմաթիվ մարդիկ: Բոլոր խորհրդային կանայք կիսում են իրենց հարազատներին ու մերձավորներին կորցրած ընտանիքների ցավն ու վիշտը:

Կոմիտեն, ասվում է ուղերձում, բազմաթիվ հեռագրեր է ստանում երկրի կինխորհուրդներից, որոնցում պատրաստակամություն է հայտնվում կիսելու վրա հասած դժբախտությունը, բարոյական և նյութական օգնություն ցույց տալու եղբայրական ժողովրդին:

Shirakcentre.org

ԿԱՆԽԱԳՈՒՇԱԿՈՒՄ

Ավելի ու ավելի շատ վարկածներ են պատմում երկրաշարժի առաջացման պատճառների շուրջ: Երկրաշարժերի կանխատեսման մասին ամենատարբեր տեսակետներ են տպագրվում: Սակայն այս ամենի մեջ ինձ հետաքրքրեցին ԽՍՀՄ ԳԱ նախագահության արտահերթ նիստի նյութերը Շմիդտի անվան երկրաֆիզիկայի ինստիտուտի աշխատանքների մասին: Այդ ինստիտուտի գիտնականների 1986 թվականին 295 օրինակով հրատարակված «Երկրաշարժերի երկարաժամկետ կանխատեսում» խորագրով մեթոդական առաջարկություններում սպասվող մոտակա ավերիչ երկրաշարժի գոտի է նշված Սպիտակ-Կիրովական-Լենինական եռանկյունին՝ 8 բալի սահմանով: Գիտնականներն առաջարկում էին մի շարք պաշտպանական միջոցառումներ, որոնց մեջ կարևոր տեղ ունեն հողօգտագործման սահմանափակումները նորակառույցների տեղաբաշխման հարցում, որոշ շենքերի կոնստրուկցիոն ամրացումն ու այն կառույցների ապամոնտաժումը, որոնց փլուզումը երկրաշարժի դեպքում կարող է վտանգավոր հետևանքներ ունենալ: Առաջարկվում է նախապես իրագործել հնարավոր վնասի հաշվառում, սպասվող աղետի հնարավոր սցենարի կազմում և նյութական ռեզերվների ստեղծում, շատ վտանգավոր աղբյուրների՝ գազատարների, էլեկտրական գծերի, ատոմակայանների, թունավոր արտադրությունների չեզոքացում: Մի քանի էջերում առաջարկվում էր տարերքի ավերիչ ուժից պաշտպանվելու մի ամբողջ համակարգ: Այս տեղեկանքը համապատասխան միջգերատեսչական կազմակերպություններում հաստատվելուց հետո հանձնվել է հանրապետությանը:

Հիմա մենք գիտենք, որ գիտնականների ոչ մի առաջարկ չի իրականացվել: Իսկ այն պետք է կենսագործեին հանրապետական կառավարությունն ու տեղական իշխանությունները:

Ակադեմիկոս Գ. Մարչուկն այս առիթով դեկտեմբերի 13-ին տեղի ունեցած նիստում նշեց, որ փաստորեն կանխատեսում է տրվել հենց այն տարածքի մասին, որտեղ և տեղի ունեցավ ավերիչ երկրաշարժը: Սակայն ոչ մի միջոց չի ձեռնարկվել: Փաստորեն դա գիտության ուժի ընկատմամբ որպես արհամարհանք և հավատի բացակայություն էր որակվում:

Եթե գիտական շրջաններում ավելի շատ վեճեր էին ծավալվում աղետի գոտու ճշտման ու չափերի կանխատեսման մասին, ապա մեր մասնագետները զուգահեռաբար հակվում էին սպասվող երկրաշարժերի ավերիչ ուժի նվազեցման կողմը: Դա ցայտուն էր երևում էներգետիկական խոշոր օբյեկտների, հատկապես հոսկական ատոմակայանի նախագծման ժամանակ: Իրոք, նման նվազեցումը միլիոնների տնտեսում տվեց: Այդ մասնագետները նույնիսկ լրացուցիչ եզրակացությամբ հանգեցին Անդրկովկասում երկրաշար-

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ԾՆՈՂՆԵՐԸ

Քույր ու եղբայր Օյնոյաններ

Այս լուսանկարից ժպտացող բալիկները մերն էին... Քանի դեռ նրանք կային, մեզանից երջանիկ ու հարուստ մարդ աշխարհում չկար...Տասներորդ դպրոցի յոթերորդ և վեցերորդ դասարանների աշակերտներ էին: Լավ էին սովորում: Այնքան էինք տարված նրանցով, այնքան էինք սիրում, որ երբ փոքր-ինչ ուշանում էին, չէինք կարողանում հանգիստ նստել...

Տղան՝ Կարենը նուրբ հոգի ուներ, բանաստեղծություններ էր գրում, նվագում, երգում, «Հայոց պատմություն» շարքը գրեթե անգիր գիտեր: Դստրիկս՝ Անուշիկը... Ինչքան ինքնատիպ, յուրօրինակ մտահղացումներ ուներ, նվագում էր, երգում: Երբ նրանց մասին գրվեց «Աղբյուր» հանդեսում, երջանկությունից մեզ կորցրել էինք...Այն ժամանակ երջանկությունից, հի մա...Վիշտը քարացել է սրտերումս, կսկիծը՝ ծանրացել ուսերիս...

ԾՈՒՇԱՆԻԿ, ՍԵՐԳՈ ՕՅՆՈՅԱՆՆԵՐ

ՀԱՐԱՏԵՎԵԼՈՒ ՃԱՄՓԱՆ ԴՈՒ ԼԱՎ ԳԻՏԵՍ

Անծայրածիր աշխարհի փոքրիկ լուսե հանգրվան, դը րախտավայր, պաշտելի հայոց հող, դո՞ւ էլ չդիմացար քո զավակների վերջին ամիսների լկկումներին ու ծով տառապանքին: Չդիմացար ու... ժայթքեցիր: Գիրկդ առար արյուն-քրտինքով քարդ ու ապառաժդ ծաղկեցնող որդիներիդ՝ էս աշխարհի դաժանություններից, անարդարություններից փրկելո՞ւ նպատակով:

Կրկին Ավարայր և կրկին Դեր-Զոր, և կրկին հայու ճակատագիր... Ողբ ու շիվանի, ճիչ ու անեծքի, հուսահատության ու ցավի միջից մխիթարանքի խոսք մենք ուրկի՞ց գտնենք, բայց կաց... Էլ ո՞վ, եթե ոչ դու, իմ ժողովուրդ, գիտի ճամփեքն աճ ու մահից դեպի Լույսը դուրս գալու: Բազմադար փորձությամբ է արյունդ թրծված ու կամքդ կոփված, և առասպելական է սերդ, հավատդ հողի, մարդու, լույսի, ճշմարտության, արար ման հանդեպ, առասպելական է պայքարդ դարերի ակունքից դարերի հեռուն գընացող:

Աշխարհի բազում կարեկից սրտեր, բյուրավոր ձեռքեր են քեզ պարզված, իմ ժողովուրդ, քեզ սատար լինելու, ցավդ կիսելու, հույսդ զորացնելու, որովհետև դու այս աշխարհին դեռ շատ ես պետք:

Դու ինքդ լավ գիտես հարատևելու ճամփան, արիացիր:

ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, սոցիալիստական աշխատանքի հերոս

Ընդամենը 26 տարեկան էր ՀԱՍՄԻԿ ՄԿՐՏՉԻ ՉԻՆԱՐՅԱՆԸ: Գորովագութ մայր էր, հավատարիմ կին ու երիտասարդ ընտանիքի հուսալի սյուն: Արվիրքը նրան և դուստրերին՝ 5-ամյա Մարինեին ու 3-ամյա Գոհարիկին թաղեց բնակելի տան փլատակների տակ: Միայն յոթ օր անց գտան ջահել մորը սիրասուն դստրիկների հետ: Գտան մեռած... Թող աստված փրկե նրանց անմեղ ու լույս հոգիները:

ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍԻ ԱՎԱԳՅԱՆԸ ծնվել է 1927 թ. սեպտեմբերի 1-ին Լիբանանի Բեյրութ քաղաքում, բանվորի ընտանիքում, կրթությունը ստացել է ազգային վարժարանում: 1944 թ. ընդունվել է Լիբանանի կոմունիստական կուսակցության շարքերը և 1946 թ. ընտրվել Սիս շրջանի բջիջի բյուրոյի անդամ, աշխատել է ներգաղթի կոմիտեում:

1946 թ. կեսերին վերադարձել է հայրենիք և հաստատվել Լենինականում: 1947 թ. ընդունվել և 1951-ին ավարտել է տեղի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1956-ից ԽՄԿԿ անդամ էր:

1950 թվականից անցել է աշխատանքի № 3 դպրոցում որպես պատմության ուսուցիչ, ապա երկար տարիներ աշխատել է Լենինականի կինոմիավորման տնօրեն:

Իր աշխատանքային կենսագրության վերջին էջը Սարգիս Ավագյանը կապեց № 15 տեխնիկական ուսումնարանի հետ, որի ղեկավարն էր մինչև կեն սաթոշակի անցնելը:

Սարգիս Ավագյանը հասարակությանը երեք արժանավոր զավակներ է տվել, սակայն շատ բան էր կապում նը րան կրտսեր որդու՝ Նաիրիի հետ. դեկտեմբերյան չարագույժ աղետի օրն էլ միասին կնքեցին իրենց մահկանացուն հարազատ տան փլատակների տակ:

ՆԱԻՐԻ ՍԱՐԳՍԻ ԱՎԱԳՅԱՆ

Ծնվել է 1958 թ. Լենինականում: 1976 թ. ավարտել է № 18 միջնակարգ դպրոցը: 1977-ին ընդունվել է Երևանի Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտը և 1982 թվականին ավարտել այն: Ծառայել է խորհրդային բանակում: 1985 թվից նա աշխատում էր Լենինականի Մայիսյան ապստամբության անվան բամբակագործվածքային ա/մ-ում՝ գլխավոր մեխանիկի բաժնում որպես պատաղձագրող:

ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ ԴԺԲԱԽՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՉԵՆՔ ԹՈՂՆԻ

ՏԱՇՔԵՆԴ. Ուզբեկստանի աշխատավորները խոր ցավով ընդունեցին Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի լուրը: Հանրապետության կարմիր մահիկի ընկերությունը միջոցներ է հանգանակում տուժած եղբայրներին օգնելու համար: Դրա համար Տաշքենդում հաշվարկային հատուկ հաշիվ է բացված: Այսօր առավոտյան ընկերության անունից Հայաստան ուղարկվեց առաջին դրամական փոխանցումը՝ 12 հազար ռուբլի:

Ուզբեկստանի բնակիչները համար, որոնք վերապրել են Տաշքենդում, Գազլիում և Ֆերգանայի հովտում տեղի ունեցած ողբերգական երկրաշարժերը, առանձնապես մոտիկ ու հասկանալի է հայ եղբայրների վիշտը,—ասում է հանրապետության կարմիր մահիկի ընկերության կենտկոմի նախագահ Ու. Վահիդովան.— Մենք հիշում ենք այն անշահախնդիր օգնությունը, որ ժամանակին օգնեցին մեզ ցույց տվեց ամբողջ երկիրը: Այսօր մենք ընդունեցինք դիմում, որով կոչ արեցինք ներգրավել հանրապետության բոլոր ուժերը և անհրաժեշտ ծգնություն ցույց տալ երկրաշարժից տուժածներին, նրանց տալ օթևան, ապահովել հագուստով, սննդով ու դեղորայքով: Ամենևին չեմ կասկածում, որ այդ կոչը համաժողովրդական պաշտպանություն կգտնի:

Shirakcentre.org

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

ՎԻԼՆՅՈՒՍ, Վիլնյուսից օդային ուղերթով դոնորական արյուն ուղարկվեց Հայաստանի մայրաքաղաք: Լիտվական ԽՍՀ առողջապահության մինիստրությունը ստեղծել է կազմխումբ, որը եղբայրական հանրապետության դեղորայքով, բժշկական կադրերով օգնություն ցույց տալու ծրագիր է մշակում: Ուսումնասիրվում է Հայաստանի բուժման կարիք ունեցող բնակիչներին հանրապետության հիվանդանոցներում և առողջարաններում տեղավորելու հնարավորություն: Լիտվայում շաբաթ օրը՝ դեկտեմբերի 10-ը հայտարարված էր դոնորի օր: Վիլնյուսում, Կաունասում և Կլայպեդայում արյան փոխներարկման կայանները կաշխատեն հասարակական հիմունքներով, դոնորներն արյուն կտան անվճար:

ՍԱՄՎԵԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ

1988 ԹՎԱԿԱՆԻ ԱՂԵՏԻՑ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Իմ Կումայրի

Ի հեռուկս քո թշնամյաց.
Ի հեռուկս չարակամի՝
Հազարամյա կենաց ծառդ
Պիտի մնա հար կենդանի:
Դու կցոլաս նոր ու շքեղ,
Դու կհագնես նոր ծիրանի,
Դու կհառնես, քանզի ոգիդ
Մեծ ճախրանքի թևեր ունի:
Եվ կհնչի խոսքդ խորոտ
Որպես խորհուրդ
լուսաբացի,
Դու կթռվես նորից,
կրկին
Հիրմունքի պես թռնդի
հացի:
Պիտի հառնի քո հանճարը
Լեռնաշխարհում իմ
հայրենի,
Էլի պիտի լինես խրոխտ,
Ու շեն քաղաք, իմ
Կումայրի:

ՎԱՐԴՈՒՀԻ ՎԱՀԱՆԻ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Դա երկրաշարժից երկու տարի առաջ էր, 1986 թվականին: Թագուհին, Վարդուհին և Սիրարփին զվարթ ժխորով մտան Վալենտինա տատիկի տունը: Թագուհին և Վարդուհին կանգնեցին հրճվանքից շողացող տատի դիմաց և միառժամանակ վեր պարզեցին երկու գրքույկներ: Աղջիկները երջանիկ էին, ծիծաղը կարկաչում էր: Սա կայն տատը չգիտես ինչու գլխի չէր ընկնում, ու նայում էր զարմացած: Այն ժամանակ Սիրարփին՝ քույրերից փոքրը, սեղանին դրեց փաթեթը և զգուշությամբ դուրս բերեց այնտեղից շոկոլադի տուփը, ասելով.

—Տատ, գլխի չե՞ս ընկնում, ախր ընդրանք քեզ իրենց նոր ստացած դիպլոմներն են ցույց տալիս:

Տատը բացականչեց. «Վայ քոռանամ» ու նետվեց գրկելու նրանց:

Վարդուհին բարձր ձայնով, մի քիչ պաթետիկ տոն վերցնելով, կարդաց նախ Թագուհու, իսկ ապա իր դիպլոմները: Տատը համբերատար լսեց մինչև վերջ ու.

—Աչքներս լույս լինի, իմ անուշ բալիկներ, բարով աշխատեք, արտասվալից խոսեց նա, ծլեք ու ծաղկեք: Նստեք, նստեք ես հիմա բալ ու ծիրան կբերեմ, աչքալուսանքի բաժակներ: Երկուսն էլ ինժեներ-մեխանիկ, մի տես, է, ինչ էլ տղամարդու մասնագիտություն են ընտրել:

—Տատ, ինձ ինչո՞ւ ես մոռանում, միջամտեց բողոքավոր Սիրարփին, ես էլ եմ ինժեներ-մեխանիկ դառնալու նրանց նման, բայց այսպիսի դիպլոմ ստանալու համար դեռ մի փոքր պիտի սպասեմ:

...Ծնվել է Վարդուհի Դարբինյանը 1964 թվականին, ծառայողի ընտանիքում: Հայրը՝ Վահանը նույնպես ինժեներ էր, մայրը՝ Աստղիկը բուժքույր:

Վարդուհին 1971 թվականին ընդունվում է անգլիական թեքումով դպրոցը, իսկ տասներորդ դասարանը ավարտում Ստ. Շահումյանի անվան № 3 դպրոցում: Հասունության ատեստատի հետ նա ստացավ մի շարք գերազանցության վկայականներ՝ օտար լեզվից, հասարակագիտությունից և մաթեմատիկայից: Ավարտել էր նաև Կոմիտասի անվան № 2 երաժշտական դպրոցի դաշնամուրային բաժինը,: Եվ, խնդրեմ, գնա ու փնտրիր քո սրտին մոտ մասնագիտությունը: Աղջիկների մեջ ավելի նկատելի էր ինժեներական հակումը, և Վարդուհին ընդունվեց պոլիտեխնիկականի մասնաճյուղի մեխանիկական ֆակուլտետը: Ուսանողական տարիներին նա ավարտեց նաև բուհի անգլերեն լեզվի խմբակը և ստացավ թարգմանչի որակավորում:

1986 թվականի օգոստոս ամսին հոկտեմբերյան բաժինը երիտասարդ շրջանավարտին ընդունեց որպես կոնստրուկտոր-ինժեներ: Երկու տարի նա աշխատեց, ըմբոշխնեց իր մասնագիտությունը: Նրա հետ հույսեր էին կապում, իսկ ձեռնարկությունը ավելի լուսավոր հեռանկարներ էր փայփայում:

Վարդուհին առանձնահատուկ կերպով գեղեցիկ էր, նոր էր բոլորել 24 տարին: Նա ամբողջությամբ կյանք էր, նվագում էր, հիանալի լոսում անգլերեն, խորանում գիտական ու մասնագիտական գրականության մեջ: Աղջիկը բարի էր, համեստ, ամոթխած: ...Վարդուհին այդ շաբաթ առավել քան հուզված էր: Լուծվելու էր նրա ամուսնության հարցը: Տանեցիք շշուկով փսփսում էին մի ինչ-որ երիտասարդի, «այսինչի բարկամի» մասին, որոնք շաբաթ օրը խնդրել էին տեսության գալ աղջկան և նախնական պայմանավորվածության համար: Կյանքը թվում էր վարդագույն երջանկության վճիտ ելևէջներից ու նվագներից կազմված: Մեծերը երազում էին բախտավորության ակնկալությամբ, իսկ Վարդուհին հատակին յորտնչա Սարսպետի հետ նստած ինչ-որ խաղ էր խաղում: Հետո երեխան աղմկեց՝ «հիշեցի, հիշեցի» կանչելով ու բռնեց նրա ձեռքից սանելով. «հույսին, ախը դու խոստացել էիր «Կարմիր ծաղիկը» հեքիաթը կարդալ: Գնանք, գնանք կարդալու»:

Առավոտ Վարդուհին տանից դուրս եկավ աշխատանքի գնալու սև թավշյա վերարկուով ու պատահողները կանգնում էին, սիրով, հրճվանքով նայելու գեղուհու հետևից: Ոչ մեկը չէր կարծում, որ դա աղջկա մահվան ճանապարհը, վերջին ճանապարհն էր:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16

ԽՄԿԿ Կենտկոմը հատուկ որոշում ընդունեց Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության բյուջեից 50 միլիոն ռուբլի առանձնացնել Հայաստանում երկրաշարժից տուժածներին օգնություն ցույց տալու նպատակով:

Ն. Ի. Ռիժկովի նախագահությամբ ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի հերթական աշխատանքային խորհրդակցության ժամանակ նշվեց, որ աղետի վայրերում իրավիճակը հոր փուլ է թևակոխում, երբ մարդկանց փրկելիս, նրանց օգնելով, պարենով ապահովելու, սանիտարական, հասարակական կարգ ու կանոն ստեղծելու ուղղությամբ անհետաձգելի, արտակարգ խնդիրների լուծման գուգահեռ առաջին պլան են մղվում նաև մյուս առավել երկարաժամկետ հոգսերը: Դրանց թվում են տղամարդկանց աշխատանքային զբաղվածությունը, շինարարական կազմակերպությունները զգալիորեն տեղական կադրերով համալրելը այդ կազմակերպությունների աշխատանքային նպատակ կտրուկ ընդլայնելու պատճառով, ձեռնարկությունների վերականգնումը, աղետի պատճառով իրարից բաժանված երեխաների և ծնողների որոնումը, Հայաստանից դուրս հանգրստյան տները, առողջարաններում էվակուացված դպրոցականների հայերեն լեզվով ուսուցումը շարունակելու գործի կազմակերպումը:

Օրվա ընթացքում փլատակների տակից հանվել են 509 զոհվածներ: Մեկ կենդանի մարդ է հանվել Սպիտակում...

ԼԻԼԻԹ ԼԵՎՈՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

№ 14 դպրոցի 5-րդ «Բ» դասարանի աշակերտուհի, 11-ամյա Լիլիթը ասես կանխազգացել էր... Դեկտեմբերի 6-ի երեկոյան դասերը չէր սովորում, պատճառաբանելով, որ հաջորդ օրը չի ուզում դասի գնալ: Մակայն գնաց և զոհվեց փլվածքների տակ: Տանը մնալ էլ, ավա՛ղ, չէր տալու դաժան ճակատագիրը. Ծրագրի փողոցի № 214 շենքը տարերքի առաջին հարվածից փուլ եկավ...

ԳՐԻԳՈՐ ՋԱՏԻԿԻ ԵԹԻՄՅԱՆ

Գրիգորը ծնվել էր Բեյրութում, 1932-ին: Աշխատում էր տնտեսաշվարկային շինվերանորոգման տեղամասում որպես բանվոր: Այստեղ ներկարար-ծեփագործ էր աշխատում նաև որդին՝ Սարգիսը: Նրանք գրեթե միշտ միասին էին, իսկ եթե աշխատանքի բերումով բաժանվում էլ էին, ապա օրավերջին անպայման հանդիպում էին, խոսում օրվա կարևոր անցուդարձի, առաջիկա անելիքների շուրջ:

ՍԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐԻ ԵԹԻՄՅԱՆ

Զգիտեին, որ ահեղավոր աղետը անգամ չի բաժանելու իրենց: Երեք երեխայի հայր էր Սարգիսը (փոքրիկը՝ ընդամենը 1 տարեկան), դեռ նոր պետք է լրանար նրա կյանքի 35-րդ գարունը: Անմեղ զոհը ի՞նչ իմանար, որ իրենց տունը էլ է փլվել, և հրաշքով փրկված կինն ու երեխաները մինչև ուշ գիշեր սպասելու են, իրենց՝ նորից իրար գլխի հավաքվելու հույսով...

Ոիրբացած 2 երեխա, առաջին մի հայ կնոջ ու բարեխիղճ աշխատողի անուն թողեց հրենից հետո ԳՈՀԱՐԻՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՄԿՐՏՉՅԱՆԸ՝ աղետի հազարավոր անմեղ զոհերից մեկը: Ընդամենը 40 տարեկան էր՝ քաղաքային սանէպիդեմկայանի աշխատակցուհին, լի կենսասիրությամբ ու հավատով իր գործընկերների վաղվա օրվա նկատմամբ: Ավա՛ղ, 88-ին փուլ եկավ նրա խոս դերը, և նրա կյանքի ժամացույցն էլ լռեց:

Այսօր նորդեն 4 տարեկան կինը՝ ՆԱԻՐԻ ՀԱՄԼԵՏԻ ՄԿՐՏՉՅԱՆԸ՝ ծնողների ու պապիկ-տատիկների սիրելի Հակը: Բնության չար ուժը և չար մարդկանց սև գործը չթողնեցին, որ նա մեծանար ու վա՛յելեր արևի լույսը, լույսը աշխարհի...

Տարիներ կանցնեն, գուցե նոր երեխաներ ծնվեն Մկրտչյանների հարկի տակ, սակայն Նաիրայից շատ երկար կհիշեն:

ՌՈՒԲԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Shirakcentre.org

ԴՈՒ ՄԵՋ ՀԵՏ ԵՍ, ՍԻՐԵԼԻ ԱՐՄԵՆ

Շատերի նման չկա Արմենը: Փոխարենը մնացել են նրա տարիների ընթացքում խնամքով հավաքած պղնձադրամներն ու թղթադրամները, մի քանի տասնյակ «ռուբիկ-կուբիկ» խորանարդիկները, թերթերից ու ամսագրերից խնամքով կտրված ու տետրերի մեջ փակցված հանրահայտ մարզիկների ու երգիչ-կատարողների դիմանկարները, նամակագիրների հարուստ հավաքածուն, շախմատային հանդեսներից կարված գրքերը: Արմենը առաջին կարգային էր (մասնակցել էր բազմաթիվ հանրապետական ու քաղաքային մրցաշարերի): Նա այսօր չկա, սակայն թողել է քաղցր ու ջերմ, անմոռանալի, միաժամանակ տխուր ու անդառնալի կսկիծախառն մի հուշ...

Ուրախ, կենսախինդ պատանի էր Արմեն Պողոսյանը: Սիրում էր կյանքը, ծնողներին, դասընկերներին, բոլոր-բոլորին: Երազում էր իրավաբան դառնալ, բայց տասներորդ դասարանում փոխեց իր մտադրությունը՝ որոշեց դառնալ տընտեսագետ. նպաստել հայրենի երկրի տընտեսության զարգացմանն ու հզորացմանը:

Ինչքան որ դրսում աշխույժ էր պատանին, այնքան էլ տանը հանդարտ էր: Ղարաբաղյան շարժման առաջին իսկ օրերից անճանաչելիորեն փոխվեց Արմենը: Կանգնում էր ամբոխի մեջ, ուշադիր լսում միտինգարարներին, գալիս էր տուն ու դառնում մի տեսակ ինքնամփոփ...

Իսկ ընդհանրապես սիրում էր աղմուկը, ծիծաղը, կատակը: Հաճախ էր «խաղում» մոր հոգու հետ.

— Մա, երկրաշարժ,— բղավում էր Արմենը և անմիջապես էլ ձեռքով խաղում սենյակներից մեկի լուսամփոփի հետ:

Մայրը սկզբում շատ էր վախենում, իսկ հետո արդեն սովորեց նրա պատանեկան չարաճճիություններին:

Հետո դառնում էր մտախոհ, տարիքին ոչ համեմատելի տխուր աչքերով:

— Մա, որ մեռնեմ ի՞նչ կանես,— կյանքի վերջին տարիներին հաճախ էր հարցնում նա, սակայն մի փոքր լռում ու շարունակում,— մա, այնպես եմ վախենում մեռնելուց...

Մայրը սիրտ էր տալիս, հանգստացնում նրան: Զուլիետա Պողոսյանը, մասնագիտությամբ մանկավարժ, ինքն էլ հաճախ տարակուսանքի մեջ էր ընկնում, չհասկանալով, թե ինչ է կատարվում որդու հետ:

— Դու դեռ ջահել ես, տղաս, դու դեռ այնքան պիտի ապրես,— հանգստացնում էր որդուն, միաժամանակ զգալով, որ ինքն էլ սկսում է կասկածով լցվել իր խոսքերի հանդեպ...

«Սովետսկի սպորտ» թերթում կարդացել էր, որ կարելի է խաղալ «Նամակագրական շախմատ» Միության տարբեր ծայրերում բնակվող մարդանց հետ: Բազմաթիվ նամակներ էին գալիս նրան Մոսկվայից ու Լենինգրադից, Բելոռուսիայից ու Ղազախստանից: Նրա մրցակիցները բան վորներ ու ինժեներներ էին, մանկավարժներ ու արվեստագետներ: Իսկ մի անգամ նույնիսկ նամակ եկավ ինչ-որ հայտնի պրոֆեսորից, որը Արմենի քայլը գնահատել էր որպես շատ ուժեղ և ինչպես գրել էր նամակում, շատ երկար չարչարվեց այդ քայլի «դեղամիջոցը» գտնելու վրա: Եվ բոլոր նամակները սկսվում էին այսպես. «Հարգելի Արմեն Թումիկովիչ...»: Ի՞նչ իմանար պրոֆեսորը, որ խաղում է... վեցերորդ դասարանցու հետ...

Դեկտեմբերի 6-ի գիշերը, երբ տանտիրները պառկեցին քնելու, Արմենը հանկարծ որոշեց կարդալ: Ինչ-որ քունը չէր տանում: Մայրն ու հայրը սնասելի բարկացան, բայց տեսնելով, որ չեն կարողանում կոտրել որդու համառությունը, պառկեցին քնելու: Գիշերվա կեսին, երբ մայրը հանկարծ արթնացավ, նկատեց որդու դատարկ անկողինը: Արմենը քնել էր ուղղակի գրասեղանին, իսկ կողքին դրված էր «Հուշեր Պարույր Սևակի մասին» գիրքը: Ի՞նչ իմանար, որ ընդամենը մի քանի ժամ անց ինքն է հուշ դառնալու...

Գնացիր, սիրելի Արմեն: Գնացիր, նույնիսկ «մնաք բարով» չասելով: Գնացիր քո անկատար ու բյուրավոր երազանքների հետ: Գնացիր, հաստատ գիտենալով, որ Բ. Ղարիբջանյանի անվան դպրոցի 10 «ա» դասարանում քո նստարանը դատարկ է մնալու: Գնացիր հույլ ազգի վշտերն ու հոգսերը մատաղ սրտումդ:

ՍԱՄՎԵԼ ԱՂԱՆՅԱՆ

ՈՒՊԵՍ ՍԵՓԱԿԱՆ ՑԱՎ...

ԹԲԻԼԻՍԻ, Հայաստան մեկնեց վնասվածքաբանների, վերակենդանացնող բժիշկների, վիրաբույժների, բուժքույրերի բրիգադը՝ Թբիլիսի 40 մարդ: Վրաստանի վնասվածքաբանության կենտրոնի փորձառու բժիշկներին ընտրել է խորհրդային հայտնի վընասվածքաբան, լենինյան և պետական մրցանակների դափնեկիր Օթար Գուդուշաուրին: Նրանք համարյա բոլորն էլ վերջինիս աշակերտներն են: Նրա կլինիկան արդեն ընդունել է երկրաշարժի շրջաններից բերված առաջին վիրավորներին:

— Հիմնականում մանկաբույժներից կազմված երկրորդ բրիգադն է ուղարկվում Լենինական, Կիրովական և աղետի մյուս շրջանները,— ՏԱՍՍ-ի թղթակցին ասաց Վրացական ԽՍՀ առողջապահության միհիստր Ի. Մենագարիշվիլին:— Օրեկ աղետի շրջանները մեկնեցին ավտոգնացքներ՝ բեռնված դեղորայքով, արյանը փոխարինող պրեպարատներով, արյան փոխներարկման մեկանգամյա օգտագործման համակարգերով: Հարյուրավոր դոնորներ՝ հանրապետությունում բընակվող ամենատարբեր ազգությունների մարդիկ, ցան կություն են հայտնել անհատույց արյուն տալ հայ եղբայրների համար: Բժիշկների երկու բրիգադներ են մեկնել Բոգդանովկա և Ախալցիխա, Հայաստանի սահմանակից վրացական շրջանները, որոնց հիվանդանոցներ են բերվել ավելի քան 200 տուժածներ: 500 տեղ է պատրաստված Թբիլիսիի հիվանդանոցներում:

ՕՍԱՆՆԱ ԶԱՎԵՆԻ ԽԱՉԵՐՅԱՆ

Ծնվել է 1952 թ. օգոստոսի 11-ին, Կումայրի քաղաքում: Ավարտել է Օրջոնիկիձեի անվան դպրոցը: Կրթությունը շարունակել է Նալչաճյանի անվան մանկավարժական ինստիտուտի ռուսական բանասիրական ֆակուլտետում: Մեկ տարի ռուսաց լեզվի ուսուցչուհի աշխատեց Աղթիկի շրջանի Սարանարտ գյուղում:

«Հայէլեկտրակոնդենսատոր» արտադրական միավորումում ավագ տնտեսագետ աշխատելուց հետո, աշխատանքի էր անցել ստանդարտային կոմպրեսորների գործարանում, որտեղ և զոհվեց ամեն երկրաշարժի ժամանակ...

ԼԵՎՈՆ ՎԱՐԴԳԵՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ո՛ւմ ինչ էիր արել լուսաչվի պատանի, որ դաժան արհամիրքին կուլ գնացիր դեռ նրանքը չճաշակած, դեռ 18 տարիդ չբոլորած, մնացիր լուսանկար ու հիշողություն, մշտարթուն մորմոք հարազատներիդ սրտերում:

Ծնվել է 1975 թվականի դեկտեմբերի 11-ին, Լենինական քաղաքում: Սովորում էր Կիրովի անվան դպրոցի 7-րդ «Բ» դասարանում:

Կյանքով աղեցում էր Լենինը: Սիրում էր սպորտն ու ընկերությունը, հաճախում էր Մերկուրովի անվան գեղարվեստի դպրոց, մասնակցում դպրոցի բասկետբոլի խմբի պարապմունքներին:

ՖԼՈՐԱ ՄԱՄԻԿՈՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

1954-ին է ծնվել Ֆլորան: 1971-ին ավարտել է Ավետիք Իսահակյանի անվան դպրոցը, 1974-ին՝ Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանը և աշխատանքի անցել Ախուրյանի շրջանի կենցաղսպասարկման կոմբինատի երաժշտական տաղավարում: Միաժամանակ նա դաշնակահարուհի է աշխատել Գետք գյուղի մանկապարտեզում: Մինչև երկրաշարժը սովորում էր երգեցողության ուսուցչուհի: Հասցրել էր ավարտել Մոսկվայի արվեստի համալսարանի երաժշտության բաժինը գերազանց գնահատականներով, բայց դաժան երկրաշարժը խլեց նրա կյանքը:

ՄԱՐՏԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Արդեն 38 տարեկան էր, ամուսնացած էր և ուներ երկու երեխա: Լուկաշինի անվան մանվածքային ֆաբրիկայում էլեկտրական բաժնի պետն էր: Բազմիցս արժանացել էր շնորհակալագրերի ու պարգևների, իսկ 1985 թ.՝ «Աշխատանքային գերազանցության համար» մեդալի: Բազմակողմանի գիտելիքների տեր էր, աշխատատեղում կոչում էին ֆաբրիկայի սիրտ: Արցախյան շարժումը և սումգայիթյան նեղեռնը ալեկոծում էին հայրենասեր երիտասարդի հոգին: Հաստատապես որոշել էր ընկերների հետ, ընտանիքով գնալ Ղարաբաղ, հայրենասիրությամբ լցնում էր նրանց հոգին, ցուցակագրում շատերին: Ֆաբրիկայի բակում էր, երբ գետինը երերաց: Օգնություն աղերսող ճիչեր լսելով, նետվեց արտադրամաս, փրկեց բազմաթիվ կանանց: Երբ արդեն նորից բակում էր, կանացի աղիողորմ մի ձայն նրան նորից արտադրամաս տարավ, այս անգամ դեպի... մահը: Մինչև կուրծքը հսկա պանելների տակ, չորսուկես ժամ արյունաքամ լինելով, մաքառեց հաղթանդամ այրը: Օգնության հասած եղբայրները, բարի մարդիկ մի կերպ հանեցին նրան, բերեցին տուն, ուր և հանգավ՝ այնքան ասելիք ու գործ թողած...

Shirakcentre.org

ԿԱՆԽԱԳՈՒՇԱԿՈՒՄ

(Սկիզբը՝ 3-րդ էջում)

ժերի հետևանքով ավերածությունները թույլ հողաշերտերի ստկայության հետևանք են, դյրեմն և կստելի է ավելի «իջեցնել» հնարավոր ցնցումների ուժը: Գիտնականների եզրակացությունները այս մասնագետների համար ոչ մի նշանակություն չունեին: Հարկավոր էր միայն պետական բարձր մակարդակ ներում որոշված ժամկետներում հանձնել կառույցը, ստանալ որոշված խրախուսադրամը, պարգևները ու պաշտոնների բարձրացումը:

Գիտական հետազոտությունների արդյունքների հրատարակումը և դրանք հասարակության սեփականությունը դարձնելու ընթացքը մեր երկրում այնքան դանդաղ է, որ դրանք, որպես կանոն իրենց նպատակին երբեք չեն ծառայում: Եթե մի շարք գիտնականների աշխատանքները ժամանակին ընդհանրացվեին, ապա դեկտեմբերյան աղետի մասին մենք նախապես կիմանայինք, և այդքան զոհ չէր տա հայ ժողովուրդը:

Այս ամենի փոնին հետաքրքիր է Ուկրաինական ԽՍՀ ԳԱ Երկրաֆիզիկայի ինստիտուտի գիտաշխատող Էմմա Նեմեյանովիչի երևույթը: Նրա անունն արդեն մեծ հռչակ էր ստացել ու շուրթից շուրթ անցնելով՝ լեգենդի քողով պատվել: Եվ ահա նա Հայաստան է: Ես ներկա էի մի հաղորդման տեսագրությանը, որը հեռուստատեսկոմի ղեկավարների կամքով եթեր չընգնաց: Բյուրոկրատական ապարատը թե ինչ էր ուզում քողարկել հեռուստադիտողներից, պետք է գուշակենք այն զրույցից, որը հեռուստատեսության ստուդիայում տեղի ունեցավ ժուռնալիստ Յուրի Կարապետյանի, Էմմա Իվանովնա Նեմեյանովիչի, հայ երկրաշարժագետների, երկրաշարժ ուղեկցող ֆիզիկական ու քիմիական երևույթներն ուսումնասիրող գիտնականների միջև:

— Գոնե իրար զանգեիք, կանխեիք աղետը,— ասաց Է. Նեմեյանովիչը:

(Շարունակությունը՝ 8-րդ էջում)

Նրան՝ ԷԼԻԶԱ ՄԱՆՈՒԿԻ ԱԴԱՄՅԱՆԻՆ մեկ անգամ տեսնողը երբեք չէր մոռանա այն անմարելի թվացող, ջերմ ու հմայիչ ժպիտը, որ փոխանցվում էր դիմացինին, ակամա ներշնչում սեր ու հիացմունք, հարգանք ու... քաղցր հիշողություն: Գեղեցիկ էր: Գեղեցիկ էր՝ հոգով, էությամբ: Ապրում էր իմաստուն և նույն իմաստությամբ դաստիարակել ու մեծացրել էր իր երեք որդիներին: Ոչ միայն սիրված մայր ու կին, այլև՝ ամենուրեք ջերմություն ու բարություն, ծիծաղ և հույս սփռող յուրահատուկ կին էր Էլիզան: Սիրում էր կյանքը, մարդկանց, իր քաղաքը: Ուժեղ էր բնավորությամբ, համբերատար. Լենինականի մանկավարժական ուսումնարանն ավարտելուց ի վեր հերթագրվել էր աշխատանքի համար ու համբերությամբ սպասում էր... Սպասում էր հավատով և ամեն անգամ խոսում վարակող լավատեսությամբ՝ իր հետևից թողնելով...կարոտ, նորից տեսնելու և զրուցելու անզուսպ ցանկություն: Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղի գրադարանում աշխատում էր որպես փոխարինող, որտեղ էլ կնքեց իր մահկանացուն՝ անհուն վիշտ պատճառելով հարազատներին ու ծանոթներին:

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

1967 թ. հուլիսի 7-ին է ծնվել, Կումայրի քաղաքում: Գերազանց գնահատականներով ավարտել է Խնկոյանի անվան միջնակարգ դպրոցը և բժշկական ուսումնարանը:

Երկար քաշքշուկից հետո 1988 թվականին աշխատանքի ընդունվեց նորաբաց № 2 հիվանդանոցային համալիրի երի կամայնի հիվանդների բաժանմունքում որպես բուժքույր: Կարճ ժամանակում նա տարվեց աշխատանքով, այնքան սիրեց հիվանդներին, որ նրան խորթ դարձավ բուժքրոջը անհրաժեշտ սառնասրտությունը: Կյանքի թելը կտրված հիվանդի համար տառապում էր ու դառնորեն լացում, տանջվելով այն մտքից, որ կան մարդկանց այն աշխարհը տանող անբուժելի հիվանդություններ: Իսկ առավել նվիրվեց այդ բաժանմունքին, Արցախին նվիրված մի մարտիկի՝ բաժանմունքի գլխավոր բժիշկ Արա Գեվորգյանի այն ժամանակ շատերին հիմարություն թվացող պայքարին մասնակցելու համար: Եվ ամոթխած մի աղջիկ, որ մարդկանց հետ խոսելիս շիկնում էր ու խոնարհում հայացքը, որին չէին ճանաչում անգամ հարևանները, մասնակցեց առաջին միտինգին ու նստացույցին, պոռթկումով ի հայտ բերելով իր հայրենասիրությունը: Երկրաշարժի օրը նա հասցրեց վերջին համայրը կպտարել:

ՄԱՐԻՆԵ ՍԱՄՎԵԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել է 1973 թ. հունվարի 14-ին: Նա սովորում էր Ա. Պետրոսյանի անվան № 10-րդ միջնակարգ դպրոցի 9-րդ «Ա» դասարանում, ավարտել էր Արմեն Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի դաշնամուրային բաժինը, բայց... ավարտական վկայականը ստացավ իր մահից հետո:

Թուխ մազերով սևաչյա մի աղջիկ էր, շատ էր սիրում իր ընտանիքը, բայց ավելի շատ՝ հայրենիքը: Պատահական չէ, որ 1988թ. փետրվարյան ցույցերի ակտիվ մասնակիցն էր:

Ծնողների աչքի առաջ օրեցօր հասունանում էր Մարինեն, չնայած փոքր տարիքին նրան բնորոշ էին կայուն քաղաքական հայացքները:

Ընտանիքում արու զավակ չկար, բայց Մարինեն մյուս երկու քույրերի համար նաև եղբայր էր: Տղամարդու նման օգնում էր հորը, միևնույն ժամանակ արտակարգ հմուտ էր կանացի գործերում:

Սակայն չար արհավիրքը կտրեց նրա կյանքի թելը դեռևս 16 տարին չբոլորած, թող նելով ժամանակից շուտ ծերացած հորը և հիվանդության պատճառով անդամալույծ դարձած, հավերժ սգացող մորը՝ զավակի անհայտ կորուստը սրտերում:

ՍՈՆԱ ՖԵԼԻՔՍԻ ՄՆՈՅԱՆ

1970 թվականի մայիսի 13...

Հիմա նա կլիներ 20 տարեկան...Բայց դաժան ճակատագիրը նրան 18 գարուններ բաժին հատկացրեց: Հոգով, էությամբ, ամեն ինչով գարնանային էր, խինդ ու ավյուն: Չէր թախծում: Գոհ էր ամեն ինչից, անգամ իրեն տրված քչով էր բավարարվում: Շուրջը ծիծաղ ու բերկրանք էր տարածում: Ծաղկափթիթ հասակում շարունակ հպարտանում էր, որ հայուհի է:

Կիրովի անվան դպրոցն ավարտեց բարձր առաջադիմությամբ: Սիրում էր կրկնել, «Միջակություն չեմ սիրում. կա՛մ լավ, կա՛մ ոչինչ»: Դեռ մանկությունից երազում էր մանկաբույժ դառնալու մասին, բայց ընդունվեց պոլիտեխնիկական ինստիտուտի հաշվողական մեքենաների բաժինը: «Որպես ծրագիրավորող՝ հաշվեսարքերով նույնպես օգտակար կլինեմ երեխաներին: Չեմ ուզում իմ հայրենի քաղաքից մի այլ տեղ գնալ ուսանելու»,—մտորեց Սոնան: Ու հավերժ մնաց հայրենի քաղաքում:

Եվ ինչո՞ւ էր շարունակ արտասանում «Ինչ որ լինի, թող որ լինի միանգամից»: Քո մահն էլ վրա հասավ միանգամից, գեղեցիկ հայուհի...

ԾՈՎԻՆԱՐ ԱՂԱՍՈՒ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Տասնյակ հազարների նման աղետի զոհ դարձավ նաև № 13 դպրոցի ֆրանսերեն լեզվի հմուտ մասնագետ, կոլեկտիվի, աշակերտների ու հարազատների կողմից սիրված ու հարգված, իրենց մորը արժանի երեք երեխաների մայր ԾՈՎԻՆԱՐ ԱՂԱՍՈՒ ՄԽԻԹԱՐՅԱՆԸ:

Նա ծնվել է 1945 թվականի նոյեմբերի 21-ին Լենինականում: Միջնակարգ կրթությունը ստացել է Չարենցի անվան № 25 դպրոցում: 1969 թվականին հաջողությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետի ֆրանսերեն լեզվի բաժինը ու թեև կարող էր մնալ մայրաքաղաքում, վերադարձավ հայրենի Լենինական: Ծանր են եղել նրա ուսանողական տարիները: Երկրորդ կուրսի ուսանողուհի էր, երբ ծնվեց առաջին երեխան, իսկ ավարտականի շեմին՝ երկրորդը: Նրա համար երկրորդ ընտանիք էր սիրած դպրոցը: Նա նույն մայրական հոգատարությամբ էր վերաբերվում իր սաներին:

Այդ աղետալի օրն էլ նա ժպտերես մտավ դասարան, պարապեց մինչև վերջ՝ չիմանալով, որ դա իր վերջին ժամը է թե աշխատանքի, թե կյանքի:

Shirakcentre.org

Զգրված նամակներ

ՔՐԻՍՏԻՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բարև, իմ սիրելի հարազատներ, իմ սիրասուն մայրիկ, իմ ընկերներ... Այնքան շատ եմ կարոտել ձեզ...Այդ զգացումը մի տեսակ ծանրացել է ու ծանր բեռան նման փլվել է կրծքիս: Ես չեմ հիշում՝ երբ և ինչպես բաժանվեցի ձեզանից: Գիտեմ միայն, որ այդ օրվանից երկար ժամանակ է անցել, մի ողջ հավիտենություն, երևի: Հիշում եմ այդ օրը. պատրաստվում էի դպրոց գընալու: Հանկարծ ինչ կատար վեց, ու էլ ձեզ չտեսա... Ինչ եք անում հիմա, ամեն ինչ նո՞ւյնն է մնացել...Ես այն ժամանակ վեցերորդ դասարանում էի սովորում...Ո՞ր դասարանում են հիմա իմ ընկերները: Ես այնպես ուզում եմ, որ այդտեղ ամեն ինչ լավ լինի....Սիրեք իրար նաև մեր փոխարեն:

ՔՈՒՅՐ ԵՎ ԵՂԲԱՅՐ

ՆԱԻՐԱ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

(Ծնված 1973 թ. մայիսի 22-ին):

ՏԻԳՐԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

(Ծնված 1977 թ. հունվարի 5-ին): Քույր և եղբայր: Երկու ծաղիկ մի ընտանիքից: Երկու անմեղ զոհեր Ա. Պետրոսյանի անվան № 10 դպրոցի 9-րդ և 6-րդ դասարաններից: Որքան էին սիրում կյանքը, ինչ երազներ ու նպատակներ ունեին... Նաիրան սիրում էր ստեղծագործել: Նա տպագրվել էր «Ամանորյան գարդ», «Պիոներ կանչ» թերթերում, «Գարնան շողեր» մանկական գրքում: Հպարտ էր, երջանիկ իր հաջողություններով և ոգևորում, թնավորում էր եղբորը՝ Տիգրանին: Իսկ վերջինիս սերը թատերական արվեստի նկատմամբ օրեցօր ավելի նկատելի էր դառնում: 1985 թ. նա տպագրվել է «Ֆիլմ» ամսագրում «Ինչպես դառնալ դերասան» վերնագրով: Խոսում էին քույր ու եղբայր, կատակում, թե որի՞ նը պատակդ ավելի շուտ կիրակնանա: Ծոտապում էին... Հանացրին: Արհավիրքը չթողեց:

ԶԱՌԱ ՌԵՄԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Նկարից նայող այս գեղեցիկ ու բարի աղջնակին՝ Բ. Ղարիբջանյանի անվան № 9 դրպրոցի ութերորդ դասարանի աշակերտուհի Զառա Ավետիսյանին սիրում էին բոլորը: Ծընվել էր իր հոր՝ Ռեմիկ Ավետիսյանի տարեդարձի օրը և մեծ ուրախություն պատճառել ծնողներին: Ժիր էր, աշխույժ ու ժպտերես: Փայլուն ավարտել էր № 1 երաժշտական դրպրոցը, միշտ արժանացել ուսուցիչների գովասանքներին: ԱՅԴ օրը, այդ չարաբաստիկ դրպեներին նրանց մոտ քիմիայի դաս էր...փլատակված դպրոցի շենքից լսվում էին Զառայի սիրտաճմլիկ օգնության կանչերը, բայց... Չկար, տեխնիկա չկար օգնելու համար: Դեկտեմբերի 8-ին առավոտյան ժամը 6-ին փլատակներից լսվում են Զառայի հոգնած վերջին բառերը՝ «թողե՛ք ընե՛մ...»: Քընեց հավիտյան:

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՔԻ ԿՈՒՐԲԱՇՅԱՆ

Ա. Պետրոսյանի անվան № 10 դպրոցի սան էր 14-ամյա Արմեն Ավետիքի Կուրբաշյանը, կարգապահ ու պարտաճանաչ աշակերտ էր: Նա չէր սիրում բացակայել դասերից, չէր սիրում ուշանալ: Միշտ օգնում էր ընկերներին, նվիրվում անկեղծ ու մաքուր սիրով: Դպրոցի պատվո տախտակից երբեք չէր իջնում Արմենի լուսանկարը: Շատերին էր օրինակ ծառայում ուսման առաջադիմությամբ և գերազանց վարքով: Արմենը երազում էր իրավաբան դառնալ. գիտակցում էր կյանքի չարն ու բարին, լավն ու վատը, ճիշտն ու սխալը և միշտ ընդառաջ գնում...լավին, բարուն ու ճըշմարիտին:

Մոտ էր 15-ամյակը, որ մըտադիր էր տոնել ընկերների հետ և մեծ շուքով: Ավա՜ղ...: Կյանքին վերջակետ դրվեց դեկտեմբերի 7-ին, դպրոցում:

ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՆ ԵԿԵԼ ԿՈՄԻ ԻԽԱՀ-ի ՓՐԿԱՐԱՐ ԶՈՀԱՏԵՍԵՐԸ:

Shirakcentre.org

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՄՎԵԼՅԱՆ

Ծնվել է 1957 թվականին, Լենինականում: Սովորել և ավարտել է Օրջոնիկիձեի անվան դպրոցը: 1972 թվականին ընդունվել է Նալչիկի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզիկոմաթեմատիկական ֆակուլտետը: Հինգ տարի անց ստանալով ֆիզիկոս-մանկավարժի որակավորում, աշխատանքային գործունեությունը սկսել է Թալինի շրջկենտրոնում որպես մանկավարժ:

Սուսաննան ամուսնացավ 1980 թվականին: Նա աշխատանքի անցավ գուլպա-նասկեղենի արտադրական միավորման հաշվիչ կենտրոնում:

Երիտասարդ մասնագետ էր, որ դեռ իր խոսքն էր ասելու արտադրության գիտական կազմակերպման, հաշվող ու ծրագրավորման սարքերի ներդրման և ձեռնարկության արդյունավետության բարձրացման գործում:

Զոհվեց աղետի օրը, աշխատանքի վայրում, իր հետ տանելով իր նման մի գեղեցիկ սեր՝ երեխաների, ամուսնու, ծնողների ու աշխարհի հանդեպ:

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՀԱԳՆԻ

Ի՞նչ գրել Հովհաննեսի մասին, մի փոքրիկ, գանգրահեր, ոսկե մազիկ տղայի, որի երկու տարին էր ընդամենը լրացել: Ծնվել էր, պատկերացում չունենալով այս աշխարհի, ծնունդի կամ մահվան մասին:

Ծնվել էր 1987 թվականի հունվարի 2-ին՝ աշխարհի չափ երջանկություն պարգևելով Ներսիսյան ընտանիքին: Նրա ամեն մի հայացքը, լուրայիններին ճանաչելը, ժպիտները, լացը, ուրախությունը, առաջին արտաբերած հնչյունները՝ իր առաջին լուսանկարների հետ զարդարում էին մանկության ալբոմի առաջին էջերը: Ավաղ, ալբոմն էլ անավարտ ու կիսատ մնաց նոր ըսկըսված կյանքի պես...

Հովիկը հառաչում էր մանկապարտեզ, ձգտում էր երեխաներին: Նրա տեսքը միայն քնքշացնում էր ամենքին՝ ծանոթ անծանոթի: Աղետի օրը երեխան հիվանդ էր ու չգնաց մանկապարտեզ, որպեսզի զոհվեր ծնողների հետ միասին քաղաքի 9 հարկանի շենքերից մեկի իրենց բնակարանում:

ՀԱԿՈԲ ԵՎ ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆՆԵՐԸ

Լուսանկարներում Տիգրանուհի Գևորգի Հակոբյանն է և նը բա եղբայրը՝ Հակոբ Հակոբյանը: Մեր ձեռքում է նրանց մոր՝ Արմինեի նամակը. «Այդ չարաբաստիկ օրը ես վեր կացա առավոտյան, աշխատանքի գնալու համար: Դուրս գալուց առաջ ես մոտեցա նրանց, նայեցի մուշ-մուշ քնած երեխաներիս և դուրս ծածկեցի իմ հետևից:

Դա մեր վերջին հանդիպումն էր: Բայց ես այդ մասին ավելի ուշ իմացա, այն բանից հետո, երբ ստորերկրյա դավադիր հարվածները թվում էին անվերջանալի, թվում էր, թե ողջ աշխարհն էր շուռ գալիս:

Ես դուրս եկա գործարանից, բոբիկ, պատառոտված և վազում էի դեպի Ղուկասյանի անվան դպրոցը: Հասա, ավաղ չգտա դպրոցը իր տեղում: Այն ամբողջությամբ հողի, քարի, փայտերի կիտուկ էր դարձել: Ես լացով փնտրում էի երեխաներիս: Սկզբում գտա փոքր աղջկան՝ Թագուհուն, որ փիրա վորված էր ձեռքից ու մոլորված կանգնել էր ավերակի մոտ: Հետո մի անգամ էլ աշխարհը փուլ եկավ գլխիս, երբ փլատակների տակից հանեցին միևնույնպես Հակոբիկիս մահացած: Երևկոյան գտանք մեծ աղջկան՝ Տիգրանուհուն, որը դեռևս կենդանի էր: Այդ վերջից հետո, երբ Տիգրանուհուն տեսա շնչելով, մի որոշ ինձ երջանիկ զգացի: Վիրավոր է, բայց հավանաբար ոտքի կըկանգնի....

Նրան տեղափոխեցի Երևան, իսկ այնտեղից 23-րդ օրը՝ Մոսկվա: Տեղավորվեց № 83 հիվանդանոցում: Այստեղ էլ աղջիկս կնքեց իր մահ կանացուցի 15 տարին չբոլորած, առանց մեզ տեսնելու, առանց որևէ բան փոխանակելու:

ԿԱՆԽԱԳՈՒՇԱԿՈՒՄ

(Սկիզբը՝ 6-րդ էջում)

— Այս հարցում մենք ուզում ենք ձեզ մեղադրել: Ինչո՞ւ չզանգեցիք, չզգուշացրիք: Գոնե անանուն հեռագիր տայիք, եթե պետական ուղիներով չէիք կարող,—ասաց ԽՍՀՄ ԳԱ Երկրաբիմիայի ինստիտուտի հայկական կայանի տնօրեն Ռ. Գևորգյանը:

— Պամիրում արշավախմբի ժամանակ իմաց տվեցինք: Մի այնպիսի տագնապ առաջացավ, բայց այնտեղ ոչ մի հոգի չի եղել,—ասաց Էմմա Նեսմեյանովիչը,— իսկ հայաստանյան երկրաշարժից առաջ իմ բնակարանի հեռախոսը չէր աշխատում: Սակայն հույժ գաղտնի նամակ է ուղարկվել Հայաստան: Ինչո՞ւ այն չի տարածվել:

— Մենք նման նամակ չենք ստացել,— պատասխանեց Ռ. Գևորգյանը:

— Բայց ինչո՞ւ նրանք տեղեկատվություն Կիրգիզիայում ստացել են, իսկ դուք՝ ոչ: Դա անհնար է,— տարակուսած ասաց ուկրաինացի գիտնականը:

Ցու. Կարապետյանը հաճախ ընդհատում էր Է. Նեսմեյանովիչի խոսքը, հայտնելով, որ տվյալ միտքը եթեր չի տրվի: Նա հաղորդման ընթացքում արդեն մոնտաժում էր նյութը...

— Ինֆորմացիան մեզանում դանդաղ են որոնում, մարսում,—ասաց Ռ. Գևորգյանը:

— Ես այլ բան նկատի ունեմ,— ասաց Է. Նեսմեյանովիչը,— եթե նախապես ներքին գործերի վարչությունը, պետանվտանգությունը կոմիտեն գիտեին, ինչո՞ւ ինֆորմացիան տեղ չեն հասցրել:

Լենինականի ինստիտուտի մասնագետները, մանավանդ Է. Գյոդակյանը, բուռն գրոհ ձեռնարկեցին ուկրաինուհու վրա: Նրանք ընդունում էին միայն դասական երկրաշարժագիտությունը՝ տեկտոնիկական:

սալերի շարժման տեսությունը: Հետո Լենինականի երկրաշարժագիտության ինստիտուտի գիտաշխատող Հակոբյանը պատմեց 1926 թվականից մինչև 1982 թվականը տեղի ունեցած երկրաշարժերի ուսումնասիրման արդյունքներով երկրաշարժերի երկարաժամկետ կանխատեսման մոդելի մասին: Այն հիմնվում էր Աֆրիկակաց և Ասիական մայրցամաքային սալերի շարժման ժամանակ սահմանային գոտում շփումներից առաջացող ցնցումների տեսության վրա: Արաբական թերակղզու սալը, որը տարեկան 3-4 սմ արագությամբ հյուսիս է շարժվում, ռեգիոնալ ճեղքվածքներ է առաջացնում: Գիտնականը բերում է վեց աղետալի երկրաշարժի օրինակներ՝ 5-6 տարի տևող ցիկլերով:

(Շարունակությունը՝ հաջորդ համարում)

«ԿՈՒՄԱՅՐԻ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ
ԿՈՒՄԱՅՐԻԻ ՔԱՂՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՄԱՅԻՍՅԱՆ Փ. 17

Shirakcentre.org